087.1
9-69

087·1
9-69

ՎԱԼԵՐԻ
ՉԿԱԼՈՎ

ՄԵՐ ԹՌԻՉՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏՀՐԱՏ 1938

Н АРМ. Э-552а
О.87·1
Ч-69
23 JUN 2009



ՎԱԼԵՐԻ ՉԿԱԼՈՎ
խորհրդային Միության հերոս

1984

ՄԵՐ ԹՌԻՉՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Гос. Публичная Б-ка

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՍԵՄ ԿԿ ԿԻՍ ՄԱՆԿԱՎԱՐԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

17 JUL 2013

16676



Հեռավոր անվայրեջք թռիչք կազմակերպելու միտքն իմ մեջ ծագել եր վաղուց, որանից շատ տարիներ առաջ: Այդ տարիների ընթացքում յես մի քանի անգամ ձեռնարկել եմ մշակելու ծրագծի վարիանտները:

Հեռավոր թռիչք կարելի յեր իրագործել միայն այն դեպքում, յերբ մեր ավիացիոն արդյունաբերությունը, մեր կոնստրուկտորները մշակեյին հեռավոր թռիչքի սավառնակի կատարելագործված տեսակ: Այդպիսի սավառնակ հանդիսացավ «ՊՍ-25»-ը:

Նրա առաջին իսկ թռիչքները խոսում եյին այն մասին, վոր հենց այդ մեքենայով հնարավոր է թռչել ավելի հեռու, քան մինչ այդ թռել եյին արտասահմանում: Այդ համոզմունքն իմ մեջ ամրացավ Խորհրդային Միության հերոս Մ. Մ. Գրոմովի փայլուն ռեյսից հետո, վոր նա կատարեց Ֆիլինի և Սպիրինի հետ:

Մենք յերեքս՝ Բայդուկովը, Բելյակովը և յես, յերկար ամիսներ ռազմնասիրում եյինք այդ հոյակապ կարմրաթև սավառնակը: Դեռևս թռիչք կատարելու համար կառավարության թույլտվությունը չունեցած՝

227-87

մենք, ճիշտն ասած, համարյա լիովին նախապատրաստվել էինք նրան: Մենք այնքան էինք վստահ այդ մեքենային, որ չճռռեցինք կառավարությանը խնդրել, որ թույլ տա թռիչք կատարել դեպի Հյուսիսային բևեռ:

I

1936 թվի հունիս ամսի սկիզբն էր: Համկ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեում տեղի էր ունենում հերթական նիստ: Սպասեցինք մինչև ընդմիջում յեղավ և մոտեցանք Սերգո Օրջոնիկիձեին և հիշեցրինք յթռչելու թույլտվություն ստանալու մեր խնդրի մասին: Ընկեր Օրջոնիկիձեն տեղյակ էր մեր աշխատանքներին, բայց պահանջում էր ամենամանրակրկիտ ձևով ստուգել սավառնակի և անձնակազմի պատրաստականությունը: Յերբ մենք կրկին դիմեցինք նրան, խնդրելով պարզել մեր նախագծի վիճակը, Սերգոն ծիծաղերով ասաց.

— Ձեզ կարողանում հանգիստ նստել... Իսկ մեքենան լա՞վ եք ստուգել: Դեհ լավ: Յես ձեզ կտանեմ ընկեր Ստալինի մոտ: Տեսնենք նա ինչ կասի...

Ժողկոմը գնաց, վերադարձավ ընկեր Ստալինի հետ: Մենք հուզված սպասում էինք նրա վերադարձին: Սենյակը մտավ ընկեր Ստալինը: Բարևելով և մեր ձեռքերը սեղմելով՝ նա հարցրեց.

— Ի՞նչ կա: Ի՞նչ եք ուզում դուք, ընկե՛ր Չկալով:

— Խնդրում ենք ձեր թույլտվությունը, Իոսիֆ Վիսարիոնովիչ, թռիչք կատարելու դեպի Հյուսիսային բևեռ:

Այդ մոմենտին մեր խմբին մոտեցան ընկերներ Մոլոտովը, Վորոշիլովը և Կագանովիչը, որոնց ընկեր Օրջոնիկիձեն հաղորդեց մեր նախագծի մասին:

Մի բոպե լռություն տիրեց: Ժողովրդի առաջնորդի հետ հանդիպումից մի քիչ շփոթված՝ մենք սպասում էինք նրա պատասխանին: Թույլ կտա՞ արդյոք ընկեր Ստալինը մեզ թռչելու դեպի բևեռ: Կվստահի՞ արդյոք մեզ այդ պատասխանատու և պատասխանատու խնդիրը: Իսկ յեթե հանկարծ մերժի՞...



ՀՀԿ Ցարկոմը ակտիվությամբ զբաղվում է գյուղերի Յերկրի հետ:

Բայց չուտով մեր ամբողջ տագնապը չքացավ։

Ընկեր Ստալինը ժպտալով մեզ առաջադրեց թռիչքի հետևյալ մարշրուտը. Մոսկվա–Կամչատկայի Պետրոպավլովսկ։

Այդ ծրագծի մասին մենք յերբեք ել չեյինք մտածել։ Ընկեր Ստալինի առաջարկը մեզ համար վոչ միայն անսպասելի յեր, այլ և՝ հրապուրիչ։ Ճանապարհը Մոսկվայից մինչև Կամչատկայի Պետրոպավլովսկ խոստանում եր բազմաթիվ նորություններ։ Պետք եր թռչել հազարավոր կիլոմետրներ, վորտեղով տակավին չեր թռել վոչ մի սավառնորդ։ Պետք եր դծել մի մեծ ուղի, վոր յերկրի սիրտը՝ Մոսկվան միացներ նրա հեռավոր արևելքի սահմանների հետ։ Մենք անմիջապես ընդունեցինք Ստալինյան մարշրուտը։

Որ ու դիշեր մենք աշխատում եյինք աերոդրոմում։ Ստուգում եյինք մեքենայի բարդ սարքավորումը, մշակում եյինք թռիչքի ծրագիծը, կենսամթերքի պաշար եյինք պատրաստում նավավթաքի դեպքի համար։ Մինչև կոկորդ խրված եյինք գործի մեջ։ Ցեվ ամեն որ մենք զգում եյինք, թե ընկեր Ստալինն ինչ ուշադրությամբ և հետևում մեր պատրաստություններին։

Ցերը հիմնական նախապատրաստական աշխատանքը վերջացավ և մնում եր միայն նշանակել թռիչքի որը, «ՊՍ—25»-ի անձնակազմը Բայդուկովը, Բելյակովը և յես հրավիրվեցինք Կրեմլ։ Այստեղ տեղի ունեցավ մեր յերկրորդ հանդիպումն ընկեր Ստալինի հետ։ Առանձնասենյակում, բացի ընկեր Ստալինից, կային նաև ընկերներ Մոլոտովը, Որջոնիկիձեն, Ցեժովը, Մեժլաուկը և Մ. Կագանովիչը։

Մենք մտանք առանձնասենյակ և բարևեցինք ներկա յեղողներին։ Ընկեր Ստալինն ասաց.

— Ձեկուցեցե՛ք, ընկե՛ր Ձկալով։

Մենք կախեցինք քարտեզը, և յես սկսեցի մանրամասնորեն պատմել առաջիկա թռիչքի մասին։ Քարտեզի վրա արդեն գծված եր թռիչքի ուղին։

Մեր նախագիծը հավանություն ստացավ։ Ցերը խոսակցությունը վերջացավ, ընկեր Ստալինը, մնաս բարև ասելիս, կատակով հարցրեց, ցույց տալով սիրտը.

— Դեհ, խղճո՛վ ասեք, ձեզ մոտ ամե՞ն ինչ կարգին է, չունե՞ք դուք արդյոք մազաչափ անգամ կասկած։

— Վո՛չ, ընկեր Ստալին։ Մենք հանդիստ ենք, մենք պատրաստ ենք թռչելու։

Այն ժամանակ, ջերմ ու բարեկամաբար սեղմելով մեր ձեռքը՝ ընկեր Ստալինն ասաց.

— Դեհ, լավ։ Թող ձեր ուղածը լինի։

Թռչելու ուղեգիրը տրվեց մեզ։

II

Ժողովրդի առաջնորդի առաջադրանքը կատարվեց։ Վերջացնելով Ստալինյան մարշրուտով թռիչքը՝ մենք վերադառնում եյինք Մոսկվա։ Մեր սիրելի «ՊՍ–25»-ը վայրէջք կատարեց Մոսկվայի մոտի աերոդրոմներից մեկում։ Ընկեր Ստալինը մեզ դիմավորեց աերոդրոմում։ Նա գրկեց և համբուրեց մեզանից յուրաքանչյուրին, մանրամասն հարցուփորձ արեց թռիչքի պայմանների մասին, գովաբանեց։ Մենք խոսք չեյինք գտնում, վորպեսզի այդ մեծ մարդուն արտահայտենք մեր սերը և նվիրվածությունը։ Մենք պատրաստ եյինք նորից ոդը բարձրանալու, վորպեսզի կրկնենք մեր թռիչքը, վորպեսզի ավելի հեռու թռչենք, մեր յերկրի համար ելի մի նոր ռեկորդ նվաճենք։

Այդ զգացմունքների մասին յես պատմեցի ընկեր Ստալինին և կառավարության անդամներին Կրեմլում, վորտեղ կազմակերպվել եր մեր ընդունելությունը։ Կրեմլի Մեծ պալատում հավաքվել եյին կուսակցության և կառավարության ղեկավարները, ոդաչուներ, կոնստրուկտորներ և ինժեներներ, ծանր արդյունաբերության և կարմիր բանակի աշխատողները։

— Մեծ պարգևի համար, ասացի յես այն ժամանակ,

դիմելով ընկեր Ստալինին,— այսպիսի ընդունելություն Թյան համար թույլ ավեք, ընկեր Ստալին, կրկնել այդ մարշրուտը:

III

Մենք հանգստանում էինք կուրորտում: Վաննաներ էինք ընդունում, լողանում էինք, մարտնչում էինք տենիսի հրապարակում, վիճում էինք բիլիարդի պառջիկա խաղերի մասին: Բելյակովն ուսումնասիրում եր Ֆրանսերեն լեզուն... Հանգստանում էինք յերեքս միասին՝ յես, Բայդուկովը և Բելյակովը: Մեզ հետ էին նաև մեր կանայք ու յերեխաները:

Մի առավոտ հնչեց հեռախոսի զանգը: Կանչում էին ինձ: Հեռախոսով հաղորդած մի քանի խոսքն ինձ շատ հուզեցին: Ընկեր Ստալինը մեզ բոլորիս, կանանց հետ միասին, ժամի 16-ին հյուր եր կանչում:

Մի քանի բոպե մենք լուռ նստած էինք: Մենք ապրվեցինք, շորներս փոխեցինք և սենյակում նստած՝ անհամբեր նայում էինք ժամացույցին: Յերբ հասավ ընկեր Ստալինի մոտ գնալու ժամանակը, մենք նորից սկսեցինք հուզվել: Հակառակի պես ոտքս ոչ ոնց չեր հարմարվում, վոր յես աշխատում էի հագնել: Ինձ վրա նույնիսկ զոռացին, շտապեցրին: Ստիպված յեղա ոձիքը նետել, հագնել մեռաքսե վերնաշապիկ և արագ հասնել ընկերներիս:

Ընկեր Ստալինն ապրում եր պտղատու այգիով շրջապատված մի ամառանոցում: Նա մեզ դիմավորեց դիմավոր մուտքի մոտ: Այստեղ եր նաև ընկեր Ժդանովը: Ուշադրությամբ գիտելով մեզանից յուրաքանչյուրին (կարդուրվե՞լ ենք արդյոք կուրորտում), ընկեր Ստալինը մեզ բոլորիս տարավ այգի: Շատ հետաքրքիր բաներ իմացանք մենք այդ օրը: Պարզվեց, վոր ընկեր Ստալինը լավ ծանոթ է այգեգործությանը, նա սիրում է պտղատու ծառեր, սիրում է նրանց մասին պատմել: Այգում կիտրոնի շատ թփեր կային, բուրում եր եվկալիպտի հոտը: Այստեղ յես առաջին անգամ իմացա ըն-

Ընկեր Չկալովն իր կին Ոլգա Եռազմովնայի յեվ իր տղա Եգորի հետ

կեր Ստալինից եվկալիպտի հրաչալի հատկությունների մասին։ Պարզվեց, որ մոծակները խիստ ատում են այդ ծառի հոտը։ Ցեվ ամերիկացիք Պանամայի ջրանցքը կառուցելիս, մարդկանց մալարիայից փրկելու համար ճահճուտներում տնկում էին եվկալիպտներ։ Ընկեր Ստալինը շատ ջերմ պաշտպանում եր եվկալիպտներ տնկելու միտքը յերկրի մի շարք վայրերում, որտեղ դրժվար է պայքարել մոծակների դեմ։

Այդին ցույց տալուց հետո ընկեր Ստալինը մեզ տարավ սենյակ։ Զրույցն ե՛լ ավելի աշխուժացավ։ Ժողովրդի առաջնորդի յուրաքանչյուր խոսքը մենք լսում էյինք հսկայական ուշադրությամբ։ Ընկեր Ստալինը հուզմունքով խոսում եր, որինակ, այն մասին, թե ինչպես մեզ մոտ շատ քիչ են աշխատում սավառնակների ելեկտրոֆիկացման պրոբլեմի վրա, մատնանշելով, որ այդ բանի մեջ, թերևս մեղավոր է թռչող անձնակազմը, որը քիչ է հետևում իր առողջությանը։ Խոսք յեղավ պարաշյուտների մասին, և ընկեր Ստալինը շատ իրավացի դիտողություն արեց։ Նա ասաց, որ բոլոր ոդաչուները պարտավոր են ավարիայի ժամանակ ոդավել պարաշյուտով։ Մարդկային կյանքը մեզ համար մեքենայից թանկ է։

Ճաշն անցավ ուրախ ու աղատ։ Հյուրերը քիչ չեյին։ Ընկեր Ստալինը հետևում եր մեզանից յուրաքանչյուրին, հյուրասիրում և առաջարկում եր մեզ դղալ, ինչպես մեր տանը։

Այդ որը մենք մեծ յերջանկություն ունեցանք լսելու ընկեր Ստալինի պատմությունը՝ ցարական ընդհատակում անցկացրած իր տարիների մասին։ Շունչներս պահած՝ մենք լսում էյինք, թե ինչպես նա պատմում եր Ցենիսեյի վրա պատահած դեպքը։ ընկեր Ստալինն աքսորավայրումն է յեղել, և մի անգամ, ձմեռը նա ընկել է սառույցի ճեղքվածքը։ Ցերը նա դուրս և յեկել, նրա փոքր շորերը սառցակալել են։ Մոտիկով անցնող կանայք, որոնք լծակներին հագցրած դուլյերով ջուր էյին տանում, վախեցել են ջրի տակից դուրս յեկող սառցակալած մարդուց և փախել։

Ճաշից հետո պատեֆոն նվագեցինք, պարեցինք, յերգեցինք։ Ընկեր Ստալինը պլատինկաներ եր ընտրում և ճայնակցում մեր յերգին։ Իսկ յերբ արդեն հյուրերը ցրվեցին, և յես պատրաստվեցի հանգստանալու, նա հանեց վերմակը և խնամքով ծածկեց ինձ։

IV

Մենք նորից Մոսկվայումն ենք։ Նորից նստած ենք քարտեզների առաջ, քննության ենք առնում առաջիկա թռիչքի ուղին։ Հյուսիսային բևվեռ թռչելու միտքը չի մոռացվել, նա մեզ հուզում է։ Բայց այս անգամ մենք վճռեցինք առաջարկել ավելի բարդ վարիանտ. Մոսկվա—Հյուսիսային բևվեռ—Հյուսիսային Ամերիկա։ Դիմում գրեցինք։ Փարիզի ավիացիոն ցուցահանդեսից վերադառնալով՝ մենք անհամբեր սպասում էյինք պատասխանին։

Այդ որերին յես համարյա չարունակ տանը նստած՝ սպասում էյի, որ Կրեմլից զանգահարեն։ Վերջապես վճռեցի քաղաքից դուրս գնալ վորսի և, վերադառնալով՝ ցավով իմացա, որ հենց այդ որն ինձ զանգահարել են։

Դեհ, հիմա արդեն յես տանից դուրս չեմ գա։

Իսկ զանգը դեռևս չի լսվում։ Մենք սկսեցինք ջղայնանալ, հուզվել։ Վեճեր էյին ծագում, թե արդյոք մեր նախագծին հավանություն կտա՞ն, թե չեն տա։ Որերն անցնում էյին... Այս ճանձրալի սպասողականությանը վերջ տվեց միշտ հանգիստ և հավասարակշռված Բելյակովը։

— Դուք, ընկերներ, ինչ ուզում եք արեք,—ասաց նա։—իսկ յես աշխատանքի յեմ անցնում։

Դա խելացի վորոշում եր։ Զբաղվելով թռիչքներով և դեկապետի իր սիրելի գործով՝ Բելյակովը դադարեց հուզվելուց։ Նրա որինակին հետևեց Բայդուկովը, որն զբաղվում եր սավառնակի փորձարկումով։ Ընթացիկ

աշխատանքները վերսկսեցի նաև յես՝ փորձելով նոր մեքենաներ։

Մի անգամ յես վորոշեցի ինքս զանգահարել Կրեմլ։ Ինձ խնդրեցին սպասել մի քանի որ։ Հունվարի կեսերին, վերջապես, հնչեց բաղձալի զանգը։ Մեզ հաղորդեցին, վոր թռիչքի ծրագիրը հաստատվել է։ Ի՞նչ ուրախություն եր։ Մենք անմիջապես գնացինք ՅԱԳԻ, վորտեղ աշխատանքն սկսեց յեռալ։ Ստուգվում եր սավառնակը և սարքավորումը։ Ցեվ հանկարծ լուր ստացվեց. հաստատել են վոչ թե մեր թռիչքը, այլ Վոդոպյանովինը՝ դեպի Հյուսիսային բևեռ։ Սկզբում մենք միանգամից չկարողացանք հասկանալ ստալինյան վորոշման իմաստությունը՝ նախ թույլ տալ Վոդոպյանովին թռչելու Հյուսիսային բևեռ, իսկ ապա՝ մեզ։ Այնինչ դա միակ ճիշտ վորոշումն եր. բևեռում իջեցրած ձմեռողների խումբը կարող եր ապահովել մեզ յեղանակի ամփոփագրի հաղորդումով։

Բայց ինչպե՞ս անել. թույլտվություն չկա, իսկ թռչելու նախապատրաստական աշխատանքներն արդեն սկսվել են։ Դադարեցնե՞լ աշխատանքը, թե վոչ։ Վճռեցինք չդադարեցնել, բայց տանել դադանի։ Այդ, ինչպես մենք եյինք վորակում, «մաքսանենգություն» եր։

Մարտին սավառնակը պատրաստ եր։ Հենց այդ ամսի վերջին եյ բևեռային եքսպեդիցիան թռավ Ռուդոլֆի կղզին։ Մեր ընկերներից վոչ վոք չգիտեր մեր «մաքսանենգ» աշխատանքների մասին։ Լրագրողները դրան տեղյակ չեյին։ Ցերը մեզ հարցափնդրեյ եյին անում, մենք ասում եյինք.

— Ի՞նչ եք ասում, ընկերներ, մենք վոչ մի թռիչքի չենք պատրաստվում։ Հենց այնպես մեքենայի հերթական վերանորոգում ենք կատարում։

Կայծակի արագությամբ ամբողջ աշխարհում տարածվեց Հյուսիսային բևեռում խորհրդային դեսանտի փայլուն վայրէջք կատարելու լուրը։ Ցես յերկար ժամանակ ինձ զսպում եյի, վերջապես չհամբերեցի և զանգահարեցի ընկեր Մոլոտովին։ Ցես խնդրեցի նրան հաղորդել, թե ի՞նչ կարծիքի յե ընկեր Ստալինը Հյուսիսային Ամերիկա թռչելու մեր առաջարկության մասին։

— Իսկ ինչպե՞ս ե ձեր նյութական մասը, մի քիչ լռելուց հետո հարցրեց ընկեր Մոլոտովը։

— Ամեն ինչ պատրաստ ե։

— Ինչպե՞ս թե ամեն ինչ պատրաստ ե։ Չե՞ վոր թույլտվություն չկա։

— Իսկ մենք համենայն դեպս...

Ընկեր Մոլոտովը ծիծաղեց և ասաց.

— Լավ, ընկեր Չկալով։ Մոտ որերս կքննենք ձեր հարցը։

Ցեվ իսկապես, մի քանի որից հետո, մայիսի 25-ին, ինձ զանգահարեցին և հաղորդեցին, թե հրավիրում են Կրեմլ՝ խորհրդակցության։

Այդ խորհրդակցությանը յես գնացի Բայդուկովի հետ. Բելյակովն այդ ժամանակ թռիչք եր կատարում։ Ցես հիշում եմ, թե ինչպես Բայդուկովի հետ մանրամասնորեն կերպով նախապատրաստվում եյինք այդ խորհրդակցությանը։

— Մեր զեկուցումը պետք է լինի համառոտ և համոզիչ,—ասում եյինք մենք։—Ցուրաքանչյուր յելույթ պետք է հաշվել բոպեներով։

Մենք այնպես եյինք չտապում ընդունելության, վոր մոռացել եյինք անցաթուղթ ստանալ և նրա մասին հիշեցինք միայն Կրեմլի դարպասի մոտ։ Մտածմունքի մեջ ընկած՝ կանգնեցրինք մեքենան։ Ի՞նչ անել, գնա՞լ արդյոք անցաթղթի հետևից։ Մոտեցավ հերթապահը, նայեց մեզ վրա և, ժպտալով, ասաց.

— Անցաթղթեր հարկավոր չեն։ Ձեզ սպասում են, ընկերներ։

Մենք նստած ենք մեծ սեղանի շուրջը։ Դուռն հետևը լսվում են քայլեր և ձայներ։ Դահլիճ են մտնում ընկերներ Ստալինը, Մոլոտովը, Վորոշիլովը, Կագանովիչը և Ցեժովը։ Մենք վեր ենք կենում և սեղմում բոլորի ձեռքերը։ Ընկեր Ստալինը դիմավորում է մեզ, ինչպես

իր բարեկամներին: Նա ժպտում է: Մենք միանգամից մեզ հանդիստ ենք զգում ավագ ընկերների շրջանում:

Դահլիճում բավարարիչ ոգաչուներ կային: Խոսք է տրվում ընկեր Լեվանևսկուն: Նա նորերս Ամերիկա գնացած լինելով, պատմում է իր ապամոնտաժումների մասին, տեղեկություններ է հաղորդում ձեռք բերած սավառնակների մասին: Ի միջի-այլոց, մենք ապշած էինք մնացել, թե ինչպես ընկեր Ստալինը հիանալի իրազեկ է նույնիսկ նեղ-տեխնիկական ավիացիոն պրոբլեմներին: Լեվանևսկին իր հաղորդման մեջ հարեվանցիորեն հիշատակեց մեկ մանրամասնություն:

— Այդ հակազդիչ կափարիչները չե՞ն,—հանկարծ հարցրեց ընկեր Ստալինը:

Իմ յերույթը յես փսեցի «ՊՍ-25»-ի բնութագրումով, մատնանշելով, վոր, մեր կարծիքով, հենց այդ սավառնակով պետք է թռիչք կատարել բեվեռի վրայով Հյուսիսային Ամերիկա: Ցես հիշեցրի, վոր իմ նախորդ թռիչքը մենք ընդհատեցինք ոդերևութաբանական պայմանների չնորհիվ, բաքերում ունենալով մեկ տոն բենզին:

Մեծ անհանգստություն պատճառեցի յես Բայդուկովին: Ցես այնպես տարվեցի, վոր քիչ եր մնում պատմեի, թե ինչպես, Վերխնեուդինսկու վրայով թռչելիս, մենք քիչ եր մնում վճռեինք ընթացքը փոխել և Հյուսիսային բեվեռի վրայով թռչել Ամերիկա:

Բայդուկովն արագ ձիգ տվեց փեչս, յես ընդհատեցի ճառս, բայց ընկեր Ստալինը ժպտալով ասաց.

— Շարունակեցե՛ք, ընկե՛ր Չկալով:

Ցերկրորդ անգամ Բայդուկովը պինչակի փեչը քաշեց այն ժամանակ, յերբ յես խոսք թռցրի «մաքսանենդ» աշխատանքների մասին: Բանն այն է, վոր յես, մոռանալով մեր պայմանը, աննկատելի կերպով պատմեցի, թե ինչպես բոլոր նախապատրաստական աշխատանքներն արդեն ավարտված են:

Բայդուկովի նույնիսկ դեմքի դույնը փոխվեց, բայց նորից հնչեց ընկեր Ստալինի ձայնը.

— Շարունակեցե՛ք, ընկե՛ր Չկալով:

Խորհրդային Միության Հերոսներ՝ բգեր. Չկալովը, Ցայդուկովը և Բելյակովը:

Ցերբ յես վերջացրի, ընկեր Ստալինի և բոլոր հավաքվածների շրթունքներին ժպիտ կար: «Ձե՞նք չտապել արդյոք, վոր նախապատրաստվել ենք,—տաղնապով մտածում էր յես:—Ձե՞ վոր կառավարական վորոշում չեր յեղել»: Նայեցի Բայդուկովին. նրա աչքերում նույն տաղնապն եր:

— Այդպես, ուրեմն, ի՞նչ դրության մեջ է նրանց մեքենան,—հարցրեց ընկեր Ստալինը ընկեր Մ. Կագանովիչին:

— Ինչպես լսեցիք, նրանք վաղուց են պատրաստ, ընկե՛ր Ստալին:

— Այո՞, լսեցի,—ծիծաղեց ընկեր Ստալինը:—Ասենք՝ յես դրա մասին վաղուց դիտեցի:

Հազիվ աղատ չունչ առանք: Ուրեմն ընկեր Ստալինը գիտեր մեր բոլոր նախապատրաստական աշխատանքների մասին: Զբաղված լինելով կարևորագույն պետական գործերով, նա չեր մոռացել նաև մեր մասին: Ուրեմն, յեթե նա գիտեր նախապատրաստության մասին, կնշանակե...

Ընկեր Ստալինն սկսեց մեզ հարց ու փորձ անել կատարած աշխատանքի, բոլոր մանրամասնությունների մասին, ըստ վորում մենք զգում էինք, թե ինչպես նա մեզ հիանալի հասկանում եր նույնիսկ կես խոսքից, լրիվ տեղյակ է բոլոր աշխատանքներին:

Ուրեմն դուք, ընկե՛ր Չկալով, ասում եք, վոր «ՊՍ–25»–ի բնորությունը ճի՞շտ է, հարցրեց նա ինձ:

Հետո, մի քիչ լռելով, ավելացրեց.

— Այնուամենայնիվ մեկ մոտոռ է... Այդ չպետք է մոռանալ:

Նիստի ամբողջ ընթացքից քաջալերված՝ յես պատասխանեցի.

— Ընկե՛ր Ստալին, գերազանց մոտոռ է: Ձե՞ վոր դա ապացուցված է և հիմք չկա անհանգստանալու: Իսկ բացի դրանից,— կատակեցի յես,— մեկ մոտոռը հարյուր տոկոսով ոխակ է, իսկ չորսը՝ չորսհարյուր:

Դահլիճում ծիծաղ առաջացավ: Ընկեր Ստալինը,



«ՊՍ—25»-ը Շչելկովի աերոդրոմում վեր սլանալու մոմենտին:

տեսնելով դահլիճ մտնող ընկեր Ալիսնիսին, ուրախ ասաց նրան.

— Դե տես, ի՞նչ կասես սրանց: Ուզում են բեվեռի վրայով թռչել Հյուսիսային Ամերիկա: Ձեր կարծի՞քն այդ մասին:

— Ըստ իմ ունեցած տեղեկությունների, ընկեր Չկալովը, Բայդուկովը և Բելյակովը պատրաստ են թռչելու: Իմ կարծիքով թռիչք կարելի է թույլ տալ,— հայտարարեց ընկեր Ալիսնիսը:

Հասավ ամենավճռական րոպեն: Ընկեր Ստալինն ելի մի քանի հարցեր տալուց հետո մի քիչ մտածեց, ապա ասաց.

— Ցեսս կողմնակից եմ:

Ուրեմն, թռչում ենք: Ցեվ այդպես, Մոսկվա —Հյուսիսային բեվեռ—Ամերիկա:

— Պարտավորեցնել թռիչքի հրամանատար ընկեր

Չկալովին՝ ամենաչնչին վտանգի դեպքում թռիչքը դադարեցնել Կանադայում:

Այդ նախադասությունը ընկեր Ստալինը կրկնեց նաև ինձ:

— Դադարեցնել թռիչքը՝ վտանգի առաջին իսկ սպառնալիք լինելու դեպքում:

Ցեռ չեյի իմանում, ինչ խոսքերով շնորհակալություն հայտնել ընկեր Ստալինին՝ մեզ ցույց տված խոշորագույն վստահության համար:

Ամուր սեղմելով թանկագին առաջնորդի ձեռքը՝ յես ասացի.

— Շնորհակալություն, ընկեր Ստալին, վստահության համար: Մենք կարդարացնենք այն:

Այս տողերը գրվում են մեր կարմրաթև դեղեցկուհու՝ «ՊՍ-25»-ի թռիչքից առաջ:

Մի քանի ժամից հետո մենք բարձրանալու յենք, ուղը և մնաս բարև ասելով հարազատ Մոսկվային, ուղղություն կվերցնենք դեպի Հյուսիս: Մենք կգործադրենք մեր բոլոր դիտելիքները, մեր ամբողջ կաչեղությունը, վորպեսզի այս անգամ ևս կատարենք մեզ տված հրամանը, արդարացնենք մեր դարաշրջանի խոշորագույն մարդու՝ ընկեր Ստալինի վստահությունը, վոր փայփայել և դաստիարակել է խորհրդային ուղաչուների կադրեր:

1937 թվի հունիսի 20-ին, 20 ժամ 20 րոպեյին Մոսկվայում Ամերիկայից ստացվեց հետևյալ ռադիոգիրը.

«Վաշինգտոն, հունիսի 20-ին, ըստ Գրինվիչի 16 ժամ 30 րոպեյին, ըստ Մոսկվայի ժամանակի 19 ժամ 30 րոպեյին Չկալովը վայրեջք կատարեց Պորտլանդի մոտ (Վաշինգտոնի շտատ) Բարակսի աերոդրոմում»:

A. 1938
Акт № 92

Թարգմ. Վ. Կամսար
Տեխ. խմբագիր՝ Ա.Ն. Գասպարյան
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Մարտիկյան

Գլավլիտի լիցզոր Կ— 4662. Հրատ. 4327
Պատվեր 1210. Տիրաժ 3000
Թուղթ 72×94. Տպագր. 1¼ մամուլ.
Մեկ մամ. 30720 նիշ. Հեղինակային 1 մամ.
Հանձնված է արտադրության 15 հոկտեմբերի, 1937 թ.
Ստորագրված է տպագրության 13 հունվարի, 1938 թ.
ԳԻՆԸ 40 Կ.

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0143441

262

16676

ԳԻՆԸ 40 ԿՊ.

Валерий Чкалов

ИСТОРИЯ НАШЕГО ПОЛЕТА

Гиз. Арм. ССР Ереван